

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ, ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼ – 2018

12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ՀԱՐՑԱՏՈՄՍ – տևողությունը՝ 150 րոպե

I. ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

(15 միավոր)

1) «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»

(9 միավոր)

ա. Նշել ճիշտ պատասխանը. 1–6-րդ առաջադրանքներ: (0,5 X 6 = 3 միավոր)

1. Նշված գործիչներից ո՞վ գիտամանկավարժական գործունեություն չի ծավալել Սանահինի և Հաղպատի վարդապետարաններում:

- | | |
|-----------------------|--------------------|
| 1) Հովհաննես Երզնկացի | 3) Վարդան Արևելցի |
| 2) Դավիթ Ալավկաորդի | 4) Հովհան Որոտնեցի |

2. 1992 թ. սկզբին ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահ ընտրվեց՝

- | | |
|---------------------|---------------------|
| 1) Սերժ Սարգսյանը | 3) Արթուր Մկրտչյանը |
| 2) Ռոբերտ Քոչարյանը | 4) Օլեգ Եսայանը |

3. Ե՞րբ է գահակալել Երվանդ Վերջինը:

- | | |
|---------------------------|---------------------------|
| 1) Ք.ա. մոտ 240 – 220 թթ. | 3) Ք.ա. մոտ 580 – 570 թթ. |
| 2) Ք.ա. մոտ 220 – 201 թթ. | 4) Ք.ա. մոտ 260 – 240 թթ. |

4. Ե՞րբ է կազմավորվել Արարատյան գունդը.

- | | |
|---------------------|----------------------|
| 1) 1915 թ. ապրիլին | 3) 1916 թ. փետրվարին |
| 2) 1915 թ. հունիսին | 4) 1916 թ. մայիսին |

5. Ե՞րբ է ստեղծվել «Ղարաբաղ» կոմիտեն.

- | | |
|---------------------------|----------------------------|
| 1) 1988 թ. հունիսի 15–ին | 3) 1989 թ. նոյեմբերի 4–ին |
| 2) 1988 թ. փետրվարի 22–ին | 4) 1989 թ. դեկտեմբերի 1–ին |

6. Շարուր–Նախիջևանը Հայաստանի Հանրապետությանը հանձնելու մասին հրամանը անգլիացի գեներալ Ղևին և Դրոն ստորագրեցին՝

- | | |
|-------------------------|-------------------------|
| 1) 1919 թ. ապրիլի 30–ին | 3) 1919 թ. ապրիլի 3–ին |
| 2) 1919 թ. մայիսի 3–ին | 4) 1919 թ. մայիսի 30–ին |

բ. Լրացնել պատասխանը: (1 X 3 = 3 միավոր)

1. Գահակալման տարիները համապատասխանեցնել Վանի թագավորության արքայի անվանը:

- | | |
|----------------|---------------------------|
| 1. Սարդուրի II | ա. Ք.ա. մոտ 835 – 825 թթ. |
| 2. Ռուսա II | բ. Ք.ա. մոտ 810 – 786 թթ. |

3. Արգիշտի I գ. Ք.ա. մոտ 685 – 645 թթ.
 4. Սարդուրի I դ. Ք.ա. մոտ 825 – 810 թթ.
 5. Մենուա է. Ք.ա. 764 – 735 թթ.
 6. Իշպուինի գ. Ք.ա. 735 – մոտ 710-ական թթ.
 է. Ք.ա. 786 – 764 թթ.

1	2	3	4	5	6

2. Հիմնադրման տարեթիվը համապատասխանեցնել ուսումնական հաստատության անվան հետ:

- 1) Վարազավանքի Ժառանգավորաց վարժարան ա) 1810 թ.
 2) Արմաշի դպրեվանք բ) 1870 թ.
 3) Ներսիսյան դպրոց գ) 1874 թ.
 4) Մուրադ-Ռափայելյան վարժարան դ) 1815 թ.
 5) Աղաբաբյան դպրոց է) 1837 թ.
 6) Երևանի թեմական դպրոց զ) 1857 թ.
 7) Գևորգյան ճեմարան է) 1824 թ.
 8) Սանասարյան վարժարան ը) 1889 թ.
 9) Լազարյան ճեմարան թ) 1838 թ.
 10) Շուշիի թեմական դպրոց ժ) 1881 թ.

1	2	3	4	5	6	7	8	9	10

3. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա) Մարտակերտի ազատագրումը
 բ) Շուշիի ազատագրումը
 գ) Զանգեզանի շրջանի ազատագրումը
 դ) Քարինտակի մարտերը
 է) Խոջալուի մարտերը
 զ) Քարվաճառի ազատագրումը
 է) Լաչինի ազատագրումը
 ը) Չաբրահիլի շրջանի ազատագրումը

1	2	3	4	5	6	7	8

գ. Լրացնել պատասխանը: (1,5 X 2 = 3 միավոր)

1. Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.

(0,5 X 3 = 1,5 միավոր)

- ա) Բեռլինի վեհաժողովից հետո հայ հասարակական-քաղաքական գործիչներն իրենց հույսերը սկսում են կապել Ռուսաստանի ռազմաքաղաքական գործող աջակցությամբ ծավալված զինված պայքարի հետ:
 բ) 1880-ական թթ. Հայկական հարցի շուրջ ստեղծված միջազգային անբարենպաստ իրավիճակը՝ բարենորոգումների խնդրի նկատմամբ եվրոպական երկրների, մաս-

նավորապես Ռուսաստանի սառն ու անտաքբեր վերաբերմունքը հուսախաբ են արել պայքարի զինված ուղին նախընտրած գործիչների մի մասին:

- գ) Արևմտյան Հայաստանում ստեղծված առաջին խմբակներից հայտնի է «Հայրենիքի սիրո գրասենյակը»:
- դ) Գաղտնիության սկզբունքի համաձայն՝ «Սև» խաչ կազմակերպության անդամները չեն ճանաչել ղեկավարներին և անդամների մեծ մասին:
- ե) Հրայրի համոզմամբ՝ օսմանյան բռնատիրությունից ազատագրումը հնարավոր է միայն կայսրության բոլոր ժողովուրդների համատեղ պայքարի շնորհիվ:
- զ) «Հայասեր-ազգասեր» կազմակերպության դատապարտված 40 անդամներից հինգի նկատմամբ մահապատժի վճիռ է կայացվել:
- է) «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունն ունեցել է մոտ 30 անդամ, որոնք փորձել են զենք առաքել «թուրքահայ եղբայրներին»:
- ը) Աղբյուր Սերոբը զգալի աշխատանք է տարել հայ-քրդական դաշինք ստեղծելու ուղղությամբ:
- թ) Մեծն Մուրադը դեմ է եղել անհատական պայքարին և հաղթանակի հասնելու միակ ուղին համարել է ժողովրդին համընդհանուր ապստամբության նախապատրաստելը:



2. Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.

(0,5 X 3 = 1,5 միավոր)

- ա. Թեև Մեսրոպ Արտազեցի կաթողիկոսի հրավիրած Սսի եկեղեցական ժողովը վերահաստատեց Սսի և Ադանայի նախորդ ժողովների որոշումները, սակայն Եվրոպայի քրիստոնեական պետություններն այդպես էլ օգնական զորքեր չուղարկեցին մահմեդականների շրջափակման մեջ հայտնված Կիլիկիային:
- բ. Կիլիկյան ավագանու՝ Ադանա քաղաքում հրավիրած ժողովը որոշեց Զաբելին ամուսնացնել Կոստանդին Գունդստաբլի թոռ Հեթումի հետ, որով էլ վերջապես լուծում էր ստանալու գահակալության խնդիրը:
- գ. Հայ-մոնղոլական դաշինքի ստորագրումը նախապատրաստելու նպատակով Հեթում I-ի հայր Կոստանդին Գունդստաբլը մեկնեց Կարակորում և բանակցություններ վարեց Մանգու մեծ խանի հետ:
- դ. 1260 թ. մոնղոլները ձեռնամուխ եղան Ասորիքի նվաճմանը, որին մասնակցում էին նաև հայկական զորքերը, սակայն 1266 թ. տեղի ունեցած ճակատամարտում հայ-մոնղոլական զորքերը ծանր պարտություն կրեցին մամլուքներից:
- ե. Կիպրոսի և քրիստոնյա Արևմուտքի ռազմաքաղաքական օժանդակությունն ապահովելու նպատակով Կիլիկյան Հայաստանի արքունի խորհուրդը 1342 թ. որոշեց կիլիկյան գահը հանձնել Գվիդոն Լուսինյանին:
- զ. Հայկական 2000-անոց այրուձին, որին հետապնդում էր ավելի քան 5-հազարանոց արաբական զորքը, Ակոռիից շարունակում է ճանապարհը և բանակ դնում Արածանիի հովտում՝ Վարդանակերտ ավանի մոտ:

- ա) 1943 թ. նոյեմբերի 28 – դեկտեմբերի 1
- բ) 1945 թ. հոլիսի 17 – օգոստոսի 2
- գ) 1919 – 1946 թթ.
- դ) 1945 թ. նոյեմբերի 20 – 1946 թ. հոկտեմբերի 1
- ե) 1945 թ. փետրվարի 4 – 11
- զ) 1921 – 1928 թթ.
- է) 1929 – 1933 թթ.

1	2	3	4	5	6

2. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:

- ա) Նիկոլա Սարկոզիի ընտրվելը Ֆրանսիայի նախագահ
- բ) «Վարդերի հեղափոխությունը» Վրաստանում
- գ) ՆԱՏՕ-ի գործերի ներխուժումը Հարավսլավիա
- դ) «Նարնջագույն հեղափոխությունը» Ուկրաինայում
- ե) «Կակաչների հեղափոխությունը» Ղրղզստանում
- զ) Հելմուտ Բոլի՝ միացյալ Գերմանիայի վարչապետության սկիզբը
- է) Մասստրիխտյան պայմանագրի ստորագրումը

1	2	3	4	5	6	7

գ. Լրացնել պատասխանը: (0,5 X 4 = 2 միավոր)

1. Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ. ընտրել չորսը:

- ա) ԳՏՀ-ի երկրորդ փուլի խոշորագույն նվաճումը տիեզերքի յուրացման գործընթացի սկիզբն էր. 1955 թ. ԽՍՀՄ-ը տիեզերք ուղարկեց Երկրի առաջին արհեստական արբանյակը, իսկ 1961 թ. տիեզերք թռավ աշխարհում առաջին տիեզերագնացը՝ Յու. Գագարինը:
- բ) Պահպանողական ուժերը 1991 թ. օգոստոսի 19-ին ԽՍՀՄ-ում պետական հեղաշրջում կազմակերպեցին, Ղրիմում գտնվող Մ. Գորբաչովը հեռացվեց իշխանությունից, իսկ երկրի կառավարումը ստանձնեց ձևավորված Արտակարգ իրադրության պետական կոմիտեն (ԱԻՊԿ):
- գ) 1990 թ. Բելգրադում լուծարվեց Վարշավյան պայմանագրի կազմակերպությունը, ուստի ԽՍՀՄ-ը փորձում էր նոր շունչ տալ Հելսինկիի գործընթացին՝ Եվրոպայի անվտանգության և համագործակցության (ԵԱՀԿ) կազմակերպությունը դարձնելով եվրոպական անվտանգության շղթայի կենտրոնական օղակը:
- դ) Հայաստանի Հանրապետությունը Եվրախորհրդի անդամ է 2000 թ. հունվարի 1-ից, սակայն Եվրամիության անդամ չէ, թեև վերջինիս հետ կնքել է «Գործընկերության և համագործակցության վերաբերյալ պայմանագիր», որը կնքվել է 1999 թ. և ուժի մեջ է մտել 2004 թվականից:

- ե) ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը, Իրաքին մեղադրելով միջազգային ահաբեկչությանն աջակցելու և միջուկային զենքի գաղտնի պատրաստման մեջ, նրան պատժելու և ռազմական գործողություններ սկսելու որոշում կայացրեց, որին անմիջապես հաջորդեց ԱՄՆ-ի հարձակումը Իրաքի վրա 2003 թ. գարնանը:
- զ) Սոցիալիստական մշակույթը խարսխված էր սոցիալիստական ռեալիզմի սկզբունքի վրա, որը տիրապետող էր ԽՍՀՄ-ում, իսկ հետագայում՝ Արևելյան Եվրոպայի և Ասիայի սոցիալիստական երկրներում, ապա նաև Կուբայում, և ձևավորվեց դեռևս 1930-ական թվականների կեսերին:
- է) 1999 թ. հունիսի 19-ն իտալական Բոլոնիա քաղաքում 29 երկրների կողմից ընդունված հռչակագրով հայտարարվում էր, որ ստեղծվում է միասնական կրթական տարածք, որի գլխավոր նպատակն է ներդաշնակեցնել ազգային կրթական համակարգերը, փոխադարձաբար ճանաչելի դարձնել հանրակրթական ու բուհական որակավորումները և ավարտական դիպլոմների ներդիրները:
- ը) XX դ. վերջերին և XXI դ. սկզբին մեծ տարածում է գտել հայտեք ճարտարապետական ուղղությունը, և այդ ոճով ստեղծված կառույցներում օգտագործվում են տեխնիկական զանազան միջոցներ, տարբեր տեսակի մետաղյա և ապակյա կառուցվածքներ:

--	--	--	--

II. ՊԱՏԱՄԽԱՆԻ ԱԶԱՏ ՇԱՐԱԴՐԱՆՔՈՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ (5 միավոր)

1. **Ներկայացնել և մեկնաբանել պատերազմի ու խաղաղության հիմնախնդիրը:** Աշխարհում և նախկին ԽՍՀՄ-ի տարածքում ի՞նչ հակամարտություններ կան: Ձեր կարծիքով՝ ինչու՞ են արդի փուլում ևս տեղի ունենում պատերազմներ կամ ցեղասպանություններ: Տեղական ի՞նչ պատերազմներ և ցեղասպանություններ են եղել վերջին տարիներին: Տարածքային և խաղաղության հիմնախնդիրների լուծման ի՞նչ ուղիներ և սկզբունքներ կան, որո՞նք են ավելի նախընտրելի. ինչու՞ :

(2,5 միավոր)

2. 1918 թվականի Մայիսյան հերոսամարտերը:

Ներկայացնել, թե ինչպես թուրք-անդրկովկասյան պատերազմը վերաճեց թուրք-հայկականի, ի՞նչ ընթացք ունեցավ այդ պատերազմը: Ներկայացնել հայ ժողովրդի մղած հայրենական պատերազմի նշանավոր հերոսամարտերը: Վերհանել և գնահատել մայիսյան հերոսամարտերի պատմական նշանակությունը:

(2,5 միավոր)

Է. Մինասյան

Պատմության հանձնաժողովի նախագահ,
պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր

06. 03. 2018 թ.